

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՍ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԴԵ ԿԱՆՈՆԵՐԱՆ ԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԳԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԹԵԿՆՈՐ,
ՊՐՈՖԵՍՐ ԲԱՐՍԵՆԻ ԳՈՐԾԱՆՅԱՆ



M. Arutyunyan

ԿԱՐՄԻՔ

Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

«10» մայիսի 2021թ.

Նիստին մասնակցում էին հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր Ա. Դուրխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման
մեթոդիկայի գծով) Ռ. Դուրխանյանը, Գ. Մարդյանը:

Ամբիոնի քննարկմանն է դրված Հայկազուն Սերգեյի Ալվրցյանի
«Գանձարանային տաղի խորհրդանշանը» դոկտորական ատենախոսությունը:

Հայկազուն Ալվրցյանի «Գանձարանային տաղի խորհրդանշանը» դոկտորական
ատենախոսության թեման արդիական է: Նրանում քննարկվում են հայ միջնադարյան
գրականության մեջ այնքան տարածված խորհրդանիշների մեկնությունների
հիմքերը՝ դրանք լայնորեն համադրելով ցարդ նույն նյութին վերաբերող այլ
մասնագետների դիտարկումների հետ: Թեման տարողունակ է և պահանջում է
խնդրի նկատմամբ ցուցաբերել հնարավորինս զգույշ և հմուտ մոտեցում, որովհետև
միջնադարյան հայ գրականությունը խորհրդանիշների լայն օգտագործման առումով
շարունակում է պարունակել բազմաթիվ գաղտնիքներ: Թեման գործնական
նշանակություն ունի հատկապես ավագ դպրոցում և բարձրագույն ուսումնական
հաստատություններում տաղի և գանձի ուսուցման ժամանակ՝ միջնադարը
միջնադարյան ըմբռնումներով բացատրելու և ոչ թե դրանք արդիական կամայական
փոփոխությունների ենթարկելու առումով: Մա երևույթ էր, որը տեղ էր գտել
խորհրդային շրջանի հայ բուհի և հայ դպրոցի դասագրքերում ու որոշ
գրականագետների գործերում: Երևույթի պատկերը բավականին հանգամանալի
տրվում է Հայկազուն Ալվրցյանի ատենախոսության մեջ:

Դոկտորական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ
գլուխներից և եզրակացություններից: Ներածության մեջ անհրաժեշտաբար
ներկայացված է հարցի պատմությունը: Ինչպես նշում է հեղինակը, դոկտորական

ատենախոսությունը գրված է պատմահամեմատական և վերլուծական մեթոդով: Նրանում հետազոտության կիզակետեր են դարձել քրիստոնեական տեսական-դավանաբանական և աշխարհընկալման հիմքերը:

Քանզի հայ բանաստեղծության քրիստոնեական շրջանը սկսվում է հինգերորդ դարից, ապա որպես սկիզբ քննության առարկա են դառնում ոսկեդարի երկու նշանավոր շարականագիրների՝ Մեսրոպ Մաշտոցի ու Հովհան Մանդակունու շարականները: Միաժամանակ ներկայացվում են շարական ժանրի առաջընթացը, թեմատիկ հարստացումը, գեղարվեստական հնարների փոփոխությունները, խորհրդանիշների հարստացումը: Հատկապես առանձնացված են հայ բանաստեղծության մեջ շրջափուլային դարձած երկու կարևոր շարականները՝ Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեայր» (VII դար) և Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» (XII դար) շարականները:

Ատենախոսն իրավացիորեն նշում է. «Շարականը ձևավորեց և կիրառության մեջ դրեց հոգևոր երգերի այլաբանական խոսքի խորհրդանշանը, որը հետագայում դարձավ գանձարանային տաղի նշանական խոսքի հիմնական առաղձը» (էջ 50):

Ատենախոսության մեջ հիմնարար տեղ ունեն հայ քնարերգության մեջ Գրիգոր Նարեկացու բերած նորությունները, որոնք այնքան առատ են այլաբանություններով ու խորհրդանիշներով: Նկատենք, որ շարականների կատարած անդրադարձերում ատենախոսը հարում է այն միջնադարագետների ճշգրիտ դրույթին, ըստ որի հայկական շարականները հենց սկզբից ազգային բանաստեղծական հիմքի վրա են ստեղծվել, և, քրիստոնեական ու կրոնական լինելով, ունեն ազգային բնույթ:

Կարևորում ենք ատենախոսի քննադատական մոտեցումը հոգևոր տաղերի բարձրարվեստության մակարդակը որոշելիս. «Անշուշտ, Գանձարանի բոլոր տաղերը չէ, որ օժտված են գրական-գեղարվեստական բարձր արժեքով. բնականաբար դրանց մեջ կան նաև գեղարվեստական արժեքի տեսակետից առավել համեստ կամ թույլ ստեղծագործություններ: Սակայն դրանք չեն քննվել և արժևորվել բուն ծիսական գործառույթի դիտանկյունից, չի բացահայտվել դրանց այլաբանական բովանդակությունը, որը, պայմանավորված տոնի էությամբ, հաճախ թելադրել է նաև տաղի լեզուն, ձևը, տաղաչափությունը, օրիմը, մեղեդին և այլն» (էջ 73):

Մանուկ Արեղյանի, Արմինե Քյոշկերյանի, Վարդան Դերիկյանի, Ասատուր Մեացականյանի, Պողոս Խաչատրյանի, Արշալույս Ղազինյանի և միջնադարը հայկական ձեռագրերով ուսումնասիրած մասնագետների կարծիքները ատենախոսության մեջ լայնորեն շրջանառության մեջ են դրվում:

Մանուկ Արեղյանի «Տաղ Վարդավառին» քերթվածի մեկնաբանման մեջ երկակիությունը չպետք է ընկալել, որ նշանավոր գիտնականը չգիտեր, թե տաղը

սկզբից մինչև վերջ այլաբանություն է և բնության գովքը Քրիստոսի պայծառակերպությունն է ներկայացնում:

Նարեկացին եվրոպական Վերածննդի հանճարների նման հասկանում էր, թե աստվածայինն առավել համակող ու տպավորիչ կլինի, եթե այն մարդուն ներկայանա իրական կյանքում մարդու աչքին այնքան հաճելի բնության երևույթներով: Սա բնավ չի նշանակում հեռացում քրիստոնեական կրոնից, այլ ընդհակառակը կրոնին հաղորդում է առավել մեծ ջերմություն ու Աստծուն նվիրվելու մեծ մղում: Չմոռանանք, որ միջնադարում կրոնը մարդկային կյանքը ցանկալի ձևով կարգավորելու ամենակարևոր միջոցն էր: Ատենախոսության մեջ գիտականորեն նպատակային են կազմված խորհրդանիշների իմաստային տեսակներն ու խմբերը՝ հավքեր, բույսեր, կենդանիներ: Ուշագրավ է Պյութագորասի թվերի տեսության մեկնաբանումը հայ միջնադարյան մատենագրության մեջ:

Հատկապես մանրամասնորեն ներկայացված է «Երգ երգոցի» մեկնաբանումը Գր.Նարեկացու կողմից:

Ընդհանրապես Գրիգոր Նարեկացու մշակած ու ներկայացրած խորհրդանշային համակարգը ուղենշային է համարվում հետագա հայ քնարերգության համար: Ամենայն մանրամասնությամբ՝ տող առ տող, քննվում են «Տաղ Վարդավառի» և «Տաղ հարութեան» քերթվածները, որոնցում մեկնաբանվում են վարդի, շուշանի, Մասիս լեռան խորհրդանիշները:

Ատենախոսը համոզված է, թե Գրիգոր Նարեկացին «Մեղեդի ճննդեան» տաղում տիրամոր շքեղաշուք պատկերով այլաբանորեն ներկայացրել է եկեղեցին. «Իրականությունն այն է, որ Գր.Նարեկացին, Տիրամոր կերպարի արտաքին նկարագրով այլաբանորեն պատկերելով եկեղեցին, չէր կարող շրջանցել քահանայապետության խորհուրդը...» (էջ 211):

Իրավացի է ատենախոսը, երբ խորհրդանիշների արմատները տեսնում է նաև հայ հեթանոսական ժամանակները ներկայացնող իրողություններում ու ծեսերում, որոնցից մեկն է խնձորի ծխական ըմբռնումը հայ հին ու նոր կրոններում, ինչպես նաև ժողովրդական բանահյուսության մեջ:

Տեղին են դիտարկվում Գր. Նարեկացու տաղերին տրված հակադիր գնահատականները (հին՝ Մ.Մկրյան, Վ.Նալբանդյան, նոր՝ Աս.Մնացականյան, Ա.Մուշեղյան): Տեղին է նկատված Ալբերտ Մուշեղյանի այն մեկնությունը, ըստ որի «Մասիսը խորհրդանշում է ջրհեղեղից ջնջված մարդկային ցեղի վերածնունդը» (էջ 236):

Տեղին են նաև սուրբգրային անունները, որոնք կան Գրիգոր Նարեկացու տաղերում ու գանձերում, իրենց բացատրություններով ներկայացնելը (էջ 256-258): Առանձնակի ներկայացվում են հեղինակային խորհրդանշանները նա:

Ատենախոսության վերջին գլուխը վերաբերում է կարևոր խնդրի. այն ներկայացնում է հոգևոր խորհրդանշանի աշխարհականացումը, երևույթի պատմական, գաղափարական նախադրյալները:

Հայկազուն Ալվրցյանի «Գանձարանային տաղի խորհրդանշանը» ատենախոսությունը հաջողված է: Այն կարող է գործնական նշանակություն ունենալ բանասիրական ֆակուլտետների մագիստրատուրայում և ներկայացվել որպես առանձին դասընթացի թեմա:

Ատենախոսության սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը:

Ամեն գիտական աշխատանքի մեջ էլ կարող են լինել որոշ թերություններ և վրիպումներ: Դրանք մատնացույց անելը բխում են ատենախոսի շահերից:

Ատենախոսը պատշաճ քանակի աղբյուրներ է օգտագործել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, սակայն կարելի էր Մաշտոցի անվան Մատենադարանի համապատասխան ձեռագրերից անձամբ նյութեր վերցնել:

Շատ ճիշտ վերլուծելով «Տաղ Վարդավառին» քերթվածը, նշելով, թե ով ինչ է ասել այդ տաղի ամեն տողի մասին, անտեսվել է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների 1988-ի թ. 11-ում (էջ 62-68) տպագրված Ա.Դուլխանյանի «Ներբողական որոշ խորհրդանիշների բացատրությունը Մաշտոցի անվան Մատենադարանի 7703 ձեռագրում» հոդվածը, որում առաջին անգամ բացատրված են Գրիգոր Նարեկացու «Տաղ Վարդավառին» քերթվածի վերջին չորս տողերը.

Գունդ-գունդ խաչաձև գնդակ,

Յարինուած երկնից շրջանակ:

Փա՛ռք Հաւր եւ Որդոյն յաւետ,

Սուրբ Հոգոյն այժմ եւ յաիտեանս:

Ատենախոսը ներածության մեջ, ապա նաև բուն շարադրանքում գրում է. «Դեռևս 5-րդ դարում հայերեն էր թարգմանվել «Երգ երգոցի» Գրիգոր Նյուսացու մեկնությունը... պետք է ենթադրել, որ այդ կարգում էր նաև Հիպոդիտոս Բոստրացու մեկնության հայերեն թարգմանությունը» (էջ 16): Այս պնդումն արվում է առանց որևէ հիմնավորման կամ հղումի: Նախ՝ Հիպոդիտոս Բոստրացուց մեզ հասած «Երգ երգոցի» ամբողջական մեկնությունը պահպանված է վրացերենով՝ թարգմանված Ժ դարում՝ հայերենից (տե՛ս Н.Март, *Тексты и размыскания по армянско-грузинской филологии*, т. III СПб, 1910): Հիպոդիտոսի մեկնության ամբողջական վավերագիրը

մեզանում պահպանված չէ (կան պատահիկներ, տե՛ս ՄՄ ձեռ. 7441 Ճառքնտրի մեջ, թերթ 179բ-180բ): Եթե ատենախոսը նկատի ունի Բոստրացու մեզ հասած ամբողջական մեկնությունը, ապա պետք է նշեր նաև, թե այն անվավեր է. վերջինս ըստ ձեռագրական տվյալների շարունակել և լրացրել է Ներսես Լամբրոնացին (ՄՄ ձեռ.4066), այլ ոչ թե գրել առանձին մեկնություն, ինչպես պնդում է ատենախոսը (էջ 16): Վերը հիշատակված որևէ աղբյուր ատենախոսության մեջ հիշատակված չէ:

Թվերի մեկնության մասին ատենախոսության մեջ հիշատակված աղբյուրներում բացակայում է Անանիա Շիրակացուն վերագրված «Սակս բացայայտութեան թուոց» աշխատությունը, որի ազդեցությանը Գրիգոր Նարեկացու երկի վրա ակնհայտ է: Հր. Թամրազյանն ապացուցել է, որ այն սխալմամբ վերագրվել է Անանիա Շիրակացուն (Ա.Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, տե՛ս «Անանիայի հայոց վարդապետի Սակս բացայայտութեան թուոց», Երևան, 1944, էջ 237-250):

Ատենախոսը «բեհեզ ծիրանի» խորհրդանշանը համարում է Գրիգոր Նարեկացու ստեղծածը (էջ 234), սակայն ՄՄ-ի ձեռ.1198-ում այս արտահայտությունը կիրառվում է «Երգ երգոցի» բնաբանային մի խմբագրված հատվածում («Ես բեհեզ ընդ ծիրանոյ՝ մարգարէքն, առաքեալքն՝ շարակարգեալ ընդ առաքելականքն»), որով վկայում է, թե այն Նարեկացու ինքնաստեղծ խորհրդանիշը չէ:

Հրաշալի է, որ ատենախոսության մեջ Դմ.Լիխաչովի «Поэтика древнерусской литературы» գրքից տեղին մեջբերումներ են կատարվում, սակայն 124 էջում մեջբերման մեջ բաց է թողնված «Природа-это второе откровение, второе писание» հատվածը, որից բխում է մեկնաբանության իմաստը:

Մեղմագրում ռուսերեն և անգլերեն ամփոփումներում ատենախոսության վերնագրերը չեն համապատասխանում հայերեն վերնագրին: Կան տեխնիկական սխալներ: «Wisdom» ամսագրի մեջ երկու տառասխալ կա (էջ 41):

Վրիպակներ կան նաև ատենախոսության մեջ՝ էջ 13, 327, 328 և այլն: Կան նաև այլ նկատումներ, սակայն ամբիոնը գնահատում է ատենախոսի աշխատանքը՝ այն երաշխավորելով պաշտպանության:


ՈՐՈՇԵՑԻՆ. Հայկագուն Մերգեյի Ալվրցյանի «Գանձարանային տաղի խորհրդանշանը» դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է Ժ.01.01- «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի պահանջներին, և նրա հեղինակն արժանի է ստանալու իր հայցած գիտական աստիճանը:

Ատենախոսության քննարկման ժամանակ ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան.գիտ.դոկտոր,պրոֆեսոր Ա.Դուրխանյանը, բան.գիտ.թեկնածու, դոցենտ Լ.Հովսեփյանը, մանկ.գիտ.թեկնածու, դոցենտներ Ռ.Դուրխանյանը, Գ.Մարդյանը:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԻՐՑԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍ. ՄԵԹ.

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,

ԲԱՆ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝




ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՅԱՆ

Պրոֆ. Ա. Դուրխանյան

ստորագրություն

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՄ



ՄԱՐԴԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ